

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՆԿԵԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ը.00.02. <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>>  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Արամ Հնայակի Առաքելյան

Պաշտոնական ընդհանրություններ՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Դ. Ռ. Գալոյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ք. Ա. Անտոնյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի հուլիսի 10-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի հունիսի 9-ին:

015 Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Ա. Հ. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ներկայումս համաշխարհային տնտեսությունը զգալի փոփոխություններ է կրում, որի պատճառը կարելի է համարել գլոբալացման աճը, առանձին երկրների և տարածաշրջանների տնտեսական ինտեգրման գործընթացները, առևտրային կապերի և ծավալների մեծացումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացումը, ինչը նպաստում է համաշխարհային տնտեսության ընդհանուր տնտեսական աճին:

Տնտեսական զարգացման ներկա փուլում Հայաստանի Հանրապետության համար այս կամ այն տնտեսական միության հետ համագործակցելու որոշման ընդունումը կապված է պոտենցիալ շահերի և ռիսկերի հետ, ինչպես սեփական, այնպես էլ տնտեսական միության այն երկրների, որոնց նա պաստրաստվում է միանալ: Նշվածին զուգընթաց անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են հարևան երկրների (Թուրքիայի և Ադրբեջանի) հետ լարված հարաբերությունները, շրջափակումը, Ռուսաստանի Դաշնության և Եվրասիական տնտեսական միության հետ ընդհանուր սահմանի բացակայությունը և այդ ամենով պայմանավորված տնտեսական համագործակցության քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

Տնտեսական համագործակցության ուսումնասիրության բնագավառում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ: Ուստի, Հայաստանի Հանրապետության համար արդիական հիմանխնդիրը տնտեսական համագործակցության քաղաքականության մշակումն է, որն առավել նպաստավոր կլինի ինչպես տնտեսական զարգացման համար, այնպես էլ ստեղծված և առաջացող քաղաքական նոր դժվարությունների հաղթահարման ուղղությամբ: Հետևաբար, ՀՀ տնտեսական համագործակցության գործընթացի վերլուծության և գնահատման խնդիրը, որը հիմնված է տնտեսական համագործակցության տեսության մեթոդաբանության վրա, ունի արդիական նշանակություն:

Այսպիսով, աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այն նվիրված է Եվրասիական տնտեսական միության հետ ՀՀ տնտեսական համագործակցության արդյունքների վերլուծությանը և Եվրասիական տնտեսական համագործակցությանը ՀՀ միանալու գործընթացի կարգավորման ու զարգացման հնարավոր ուղիների առաջարկությանը:

**Աշխատանքի նպատակը և խնդիրները:** Աշխատանքի նպատակն է գնահատել Եվրոպական Միության և Եվրասիական տնտեսական միության երկրների հետ Հայաստանի տնտեսական համագործակցության արդյունքները և Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ միանալու հնարավոր միտումները, որոնք հիմնված են միջազգային առևտրի գործընթացների և օտարերկրյա ուղղակի ներդրումների ուսումնասիրության վրա: Այս նպատակին համապատասխան առաջարկվել են տվյալ աշխատանքի կառուցվածքը և տրամաբանությունը, որոնք ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը.

- բացահայտել տնտեսական համագործակցության ցուցանիշները և առաջարկել ՌԴ, ԲՀ և ԴՀ՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու արդյունավետության գնահատման մոտեցումները,

- ուսումնասիրել առևտրատնտեսական հարաբերությունների գնահատման փորձը, հայրենական հետազոտողների կողմից կատարված աշխատանքները<sup>1</sup>, Բ. Բալասսայի և Աքուիմիոի ինդեքսները կիրառելով՝ զարգացնել այդ ուղղությամբ ՀՀ տնտեսությանը վերաբերվող արդյունքները, բացահայտել ՀՀ-ում արտադրվող և միջազգային շուկաներում համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի դինամիկ շարքը,
- ուսումնասիրել տնտեսական համագործակցության խնդիրները, տեսակները և մակարդակները, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտիները, մաքսային և տնտեսական միությունները և բացահայտել ՀՀ տնտեսական համագործակցության հնարավոր ուղիները,
- ուսումնասիրել տնտեսական համագործակցության գործընթացների և տնտեսական միությանը միացող երկրների քաղաքականության վերլուծությանը նվիրված աշխատությունները և հիմնավորել ՀՀ-ի ԵԱՏՄ-ին միանալու որոշումը,
- ուսումնասիրել ՀՀ տնտեսական համագործակցության գործընթացները միջազգային առևտրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների ոլորտներում և առաջարկել ինչպես առևտրային, այնպես էլ ներդրող գործընկեր-երկրների հետ Հայաստանի բազմակողմանի և երկկողմանի համագործակցության արդյունավետության գնահատման մոտեցումները,
- հիմնավորել ՀՀ տնտեսական ինտեգրման գործընթացի կարգավորման անհրաժեշտությունը և առաջարկել ՌԴ-ի, ԲՀ-ի և ՂՂ՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու որոշումները,
- առաջարկել միջազգային առևտրի և ներդրումների աճի գնահատման մոդելները, որոնք հնարավորություն են տալիս ստանալ տնտեսական միություններին Հայաստանի միանալու արդյունքների գնահատականը:
- առաջարկել ՀՀ համագործակցության մոդելը էներգետիկայի բնագավառում և գնահատել ՀՀ-ՌԴ համագործակցության փոխադարձ օգուտները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսական համագործակցության գործընթացներն են՝ հիմնված տեսական, գործնական և մեթոդաբանական ուսումնասիրությունների վրա, իսկ առարկան տնտեսական համագործակցության հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդի մոտեցումների կիրառությունն է:

**Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը:**

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսական համագործակցության գործընթացներին նվիրված ուսումնասիրությունները, ինչպես նաև հայրենական և արտասահմանյան մի շարք գիտնականների կողմից կատարված հետազոտությունները, պատմությունը, Եվրասիական տնտեսական միության ձևավորման տնտեսական և իրավական հիմքերը ՌԴ և ՀՀ օրենքները միջազգային օտարերկրյա ներդրումների և մաքսային վերահսկողության գործընթացի ոլորտում:

<sup>1</sup> Թ.Թորոսյան, Լ. Սարգսյան Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները ՀՀ-ում, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, էջ 253-263

Լ. Սարգսյան, Ռ. Գևորգյան Տնտեսական վերափոխումների ընթացքը և ձգնաժամը Հայաստանում, <<Վրդարության>> մատենաշար, թիվ 6. Խորհրդաժողովի նյութեր, Երևան 2010, էջ 2-9,

Ղ. Գալոյան Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները, Տնտեսագիտության դոկտորի գիտ.

Աստիճանի շնորհման սեղմագիր, Երևան, 2014, էջ 46

Հ. Սարգսյան, Ա.Մարկոսյան, Բ. Ավագյան ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցությունների հիմնախնդիրները, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, էջ 92-118

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կառավարության, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների հրապարակած տվյալները, վիճակագրական, վերլուծական նյութերը, տնտեսագիտական ամսագրերը, այլ նյութեր:

Աշխատանքի կատարման ընթացքում կիրառվել են նմանակող մոդելների վրա հիմնված տնտեսագիտամաթեմատիկական մոդելներ և համեմատական ու գործնական վերլուծության մեթոդներ:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:** Հիմք ընդունելով ՀՀ տնտեսության առանձնահատկությունները, հարևան, ԱՊՀ և Եվրասիական տնտեսական միության երկրների հետ նրա տնտեսական և քաղաքական հարաբերությունները՝ ատենախոսության գիտական նորույթի էությունը վերլուծության մեթոդների մշակումն է և տնտեսական համագործակցության գործընթացի կարգավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներն են, հետևաբար.

1. Ռեսուրսափրվել են տնտեսության ներձյուղային մասնագիտացման գնահատման մեթոդները, առաջարկվել են ՀՀ-ում ապրանքային խմբերի արտահանման համեմատական առավելության դինամիկ գնահատականները, որոնց հիման վրա առանձնացվել են հետխորհրդային և այլ երկրներում ՀՀ-ի մրցունակ ապրանքային խմբերը և այդ ապրանքների արտահանման ծավալները:

2. Ռեսուրսափրվել են ՀՀ արտաքին առևտրի ժամանակային շարքերը և կիրառելով տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ՝ մշակվել են գրավիտացիոն մոդելներ, որոնց հիման վրա առաջարկվել են ՀՀ արտահանման մրցունակության գնահատականները ԵՄ և հետխորհրդային երկրների շուկաներում:

3. ՌԴ-ի կողմից ՀՀ-ին տրամադրվող գազի <<քողարկված սուբսիդավորման>> գործընթացի ուսումնասիրությամբ առաջարկվել է ՌԴ-ի վճարի նմանակային մոդել, և դրա հիման վրա տրվել են ՀՀ ՀՆԱ-ի փոփոխության գնահատականը՝ կախված ՀՀ-ին, որպես ԵԱՏՄ անդամ-երկիր, տրված քվոտայից:

4. Բնութագրվել են ԵԱՏՄ և այլ երկրների ներդրումային հոսքերը դեպի ՀՀ, և բացահատվել են ՀՀ-ի այն ճյուղերը, որոնց արտադրած ապրանքային խմբերը մրցունակ են միջազգային շուկաներում:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնադրույթները հրատարակվել են վեց գիտական հոդվածներում, ինչպես նաև զեկուցվել են <<ԵՊՀ, տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, 3 Միջազգային գիտաժողով>>-ում, Երևան 2015թ.:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 129 էջ առանց հավելվածների, պարունակում է 36 աղյուսակ, 15 գծապատկեր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի հիմնական արդյունքները և գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտական ու գործնական նշանակությունը: Ատենախոսության առաջին գլխում` **«Տնտեսական համագործակցության տեսական և մեթոդաբանական հիմքերը»**, ներկայացված են տնտեսական համագործակցության հասկացությունը, տեսակները, տնտեսական միությունների ստեղծման և զարգացման փուլերը, ներկայումս ձևավորված տնտեսական միությունների համեմատական վերլուծությունը և դրանց հիմնական բնութագրերը, տրված է ազատ առևտրի գոտիների և մաքսային միության բնութագիրը: Ուսումնասիրված են տնտեսական համագործակցության արդյունավետության գնահատման մեթոդները, տնտեսական համագործակցության հիմնական ցուցանիշները և միջազգային առևտրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների մոդելները, ինչպես նաև տրված է տնտեսական միություններին միացող երկրների համար համագործակցության գործընթացի կարգավորման առկա մոտեցումների վերլուծությունը:

Տնտեսական համագործակցության գործընթացի կարգավորումը և դրա արդյունավետությունը առաջին հերթին որոշվում է տնտեսական միության երկրների միջև իրականացվող առևտրի ծավալով, օտարերկրյա ուղղակի ներդրումների աճով, ինչպես նաև տնտեսական աճի վրա դրանց ազդեցությամբ: Տնտեսական համագործակցության գործընթացի արդյունավետ կարգավորման խնդիրը լուծելու համար տնտեսական միությանը միացող երկիրը պետք է հաշվի առնի տնտեսական համագործակցության արդյունավետությունը որոշող հետևյալ գործոնները.

- նախկինում տնտեսական միության երկրների և միությանը միացող երկրների միջև տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները,
- միջազգային առևտրին ու օտարերկրյա ներդրումներին վերաբերող երկրի օրենսդրության վիճակը և դրանց միասնականացման գործընթացը ձևավորված տնտեսական միության համար,
- տնտեսական միության երկրների և միությանը միացող երկրների միջև օտարերկրյա ուղղակի ներդրումները և առևտրի ծավալը,
- Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ միության երկրների անդամակցությունը և նրա ազդեցությունը տնտեսական միության երկրների միջև առկա տնտեսական հարաբերությունների վրա:

Տնտեսական համագործակցության գործընթացի կարգավորման քաղաքականությունը, որն ուղղված է ոչ միայն միջազգային շուկայում երկրների մասնաբաժինը ընդլայնելուն, այլև տնտեսական զարգացմանը և շահույթի մեծացմանը, դրված է տնտեսական միության ստեղծման հիմքում:

Սկսած 1950-ական թվականներից Եվրոպայում զարգանում է երկրների տնտեսական ինտեգրման գործընթացը, որը 1960-ականներից տարածվել է մյուս տարածաշրջանների վրա: Տնտեսական ինտեգրման գործընթացի հիմնական պատճառն այն է, որ ինտեգրվող երկրները ձգտում են բարձրացնել արտադրության տնտեսական արդյունավետությունը, հետևաբար, տնտեսական համագործակցությունը նախ ունի տնտեսական բնույթ: Վերջին տարիների ընթացքում տեղի ունեցող ինտեգրված երկրների բլոկների աճը պայմանավորում է աշխատանքի միջազգային

բաժանուճը և ազգային տնտեսությունների միջազգային տնտեսական կոոպերացիան<sup>2</sup>:

Միջազգային կոոպերացիայի զարգացման արդյունքում ձևավորվում են վերազգային կորպորացիաներ, որոնք կազմակերպում են արտադրությունը միջազգային մասշտաբով և կարգավորում են միջազգային շուկան:

Ա. Մարկոսյանի, Գ. Նազարյանի, Դ. Հախվերդյանի «Միջազգային տնտեսական հարաբերությունները» աշխատությունում<sup>3</sup> նշվում է, որ միջազգային տնտեսական համակարգում առաջացել էին առանձին երկրների միջև տնտեսական համագործակցության նոր ուղղություններ՝ հիմնված ընդհանուր շուկայական մեխանիզմների զարգացման և համաձայնեցման վրա:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության համակարգը բնութագրվում է տնտեսական համագործակցության միտումով, ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակում հիմնված.

- տնտեսական կյանքի աճող միջազգայնացման,
- համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի արագացման,
- աշխատանքի միջազգային բաժանման խորացման,
- ազգային տնտեսությունների բացության խորացման վրա:

Համաձայն Ա. Դարբինյանի<sup>4</sup>՝ ինտեգրման արդյունքում երկրների միջև առաջանում է սերտ համագործակցություն, և նրանք հայտնվում են մի շարք բարենպաստ պայմաններում: Ինտեգրման գործընթացների միտումները և դրանց զարգացումները պայմանավորում են ուսումնասիրել ինտեգրման գործընթացում ընդգրկված երկրների ինստիտուցիոնալ զարգացումները:

Դ. Հախվերդյանի<sup>5</sup> «Գլոբալացման պայմաններում Հայաստանի Հանրապետության տնտեսության կարգավորող ինստիտուտների հիմնախնդիրները աշխատությունը նվիրված է ՀՀ տնտեսության կարգավորող ինստիտուտների գործունեության հիմնախնդիրների ուսումնասիրությանը, որոնք պայմանավորված են ՀՀ տնտեսական համագործակցության գործընթացներով: Առաջարկված է նաև ինստիտուցիոնալ զարգացման դինամիկայի ուսումնասիրության գրավիտացիոն մոդել, և տրված են ինտեգրման քանակական գնահատականներ:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների բազմակողմանի ուսումնասիրությանն է նվիրված Դ. Գալոյանի<sup>6</sup> «Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները» աշխատությունը, որտեղ հաշվի առնելով ինտեգրվող երկրների տնտեսությունների բազմաբնույթ գործոնների առկայությունը և դրանց ուսումնասիրության անհրաժեշտությունը բացահայտվում է ինտեգրված տնտեսական միության երկրների տեխնոլոգիական ներուժը: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ն չունի ելք դեպի ծով, հեղինակը անդրադարձել է նման առանձնատկություն ունեցող

<sup>2</sup> Libman A. Models of economic integration – Russian and Post-Soviet experience, <http://mpr.ub.unimuenchen.de/19434>,  
<sup>3</sup> Ա. Մարկոսյանի, Գ. Նազարյանի, Դ. Հախվերդյանի, Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՃՀՀ, 2012, Մաս I, էջ 69-88:  
<sup>4</sup> Դարբինյան Ա. Վ. Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներում, Երևան, պետական ծառայություն 2000թ., էջ 47-51,  
<sup>5</sup> Դ.Հախվերդյանի «Գլոբալացման պայմաններում Հայաստանի Հանրապետության տնտեսության կարգավորող ինստիտուտների հիմնախնդիրներ», Տնտեսագիտության դոկտոր գիտ. աստիճանի շնորհման սեղմագիր, Հեղ հրատ., Երևան 2013.-46 էջ:  
<sup>6</sup> Գալոյան Դ. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները, Տնտեսագիտության դոկտոր գիտ. աստիճանի շնորհման սեղմագիր Հեղինակային հրատարակություն, Երևան 2014, 46 էջ

երկրների տնտեսական համագործակցության գործընթացների ուսումնասիրությանը և առաջարկել է Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի քանակական գնահատականը ՀՀ-ի համար:

Ա. Մարկոսյանի, Ղ. Հախվերդյանի, Գ. Նազարյանի աշխատությունը<sup>7</sup> նվիրված է ՀՀ տնտեսության ուսումնասիրությանը միջազգային տնտեսական հարաբերությունների համատեքստում: Այս առումով, ուսումնասիրվող հիմնախնդրի ձևավորման ու համապատասխան բացահայտումների առաջարկման համար հեղինակները ներկայացնում են միջազգային տնտեսական համագործակցության առանձնահատկությունները և մասնավորապես անդրադառնում են համաշխարհային տնտեսության գլոբալացմամբ պայմանավորված հիմնախնդիրների առաջադրմանը: Հեղինակները հատուկ ուշադրության են արժանացնում միջազգային առևտրի գործընթացի կազմակերպման գործում տրանսպորտի ապահովմանը ու դրանով պայմանավորված տրանսպորտային, ապրանքային հոսքերի և մաքսային ձևակերպումների հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Ռեսուրսատար և տեխնոլոգիատար ապրանքների արտահանման ուսումնասիրությանն է նվիրված Թ.Թորոսյան, Լ. Սարգսյան, «Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը<sup>8</sup>, որտեղ հեղինակները, համեմատելով նշված ապրանքների տեսակարար կշիռը, եկել են հետևյալ եզրակացության. 2011թ. համեմատած 2010թ. հետ տեխնոլոգիատար ապրանքների տեսակարար կշիռը նվազել է, և աճել է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը:

Հարևան երկրների շուկաներում Հայաստանի արտահանման ներուժի ուսումնասիրությանն է նվիրված<sup>9</sup> Գ. Հայրապետյանի և Վ. Հայրապետյանի աշխատությունը: Հեղինակները ուսումնասիրելով ՀՀ արտաքին առևտրի դինամիկան Վրաստանի, Իրանի և Թուրքիայի միջև կատարել են համեմատական վերլուծության և բացահայտել են ՀՀ-ի այդ երկրների հետ միջազգային առևտրային հոսքերի վարվելակերպը, գնահատելով այդ հոսքերի աճի և նվազման ժամանակահատվածները: Հեղինակները անդրադառնում են նաև գրավիտացիոն մոդելների ուսումնասիրությանը և դրանց նշանակությանը միջազգային առևտրում<sup>10</sup>:

Կապիտալի միջազգային միգրացիային է նվիրված Զ. Թադևոսյանի<sup>11</sup> «Կապիտալի միջազգային միգրացիա» աշխատությունը, որտեղ ուսումնասիրվում է կապիտալի միջազգային միգրացիայի գործոնի դերը միջազգային տնտեսական հարաբերությունների ձևավորման գործում: Հեղինակը, վերլուծելով կապիտալի միջազգային միգրացիայի առանձնահատկությունները, առաջարկում է դիտարկել այն «որպես արտադրության գործոն» և, հետևաբար, նպատակահարմար է գտնում երկրների միջազգային հարաբերությունների գործընթացում բացահայտել միգրացիոն կապիտալի քանակական գնահատականները: Կապիտալի միջազգային միգրացիան ունի տնտեսական հետևանքներ գլոբալացման պայմաններում գտնվող երկրների տնտեսությունների վրա ու

<sup>7</sup> Մարկոսյան Ա., Հախվերդյան Ղ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, ԱՌՏ, 2002, 432 էջ, էջ 43-52, էջ 287-315

<sup>8</sup> Թորոսյան Թ., Լ. Սարգսյան, Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, էջ 253-263

<sup>9</sup> Г. Айрапетян, В. Айрапетян, Экспортный потенциал Армении на рынках соседних стран, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, էջ 264-279

<sup>10</sup> էջ 268-270:

<sup>11</sup> Զ.Ա. Թադևոսյան, Կապիտալի միջազգային միգրացիա, Երևան, 2002, 65 էջ, էջ 55-63

այդ թվում՝ ՀՀ-ի տնտեսության վրա: Հետևաբար, հեղինակը կարևորում է գնահատել ՀՀ-ի տնտեսական իրավիճակը կապիտալի միջազգային միգրացիայի պայմաններում:

Միջազգային տնտեսական ինտեգրման հիմնախնդիրների ուսումնասիրությանն է նվիրված Ջ. Թադևոսյանի, Դ. Գալստյանի «Միջազգային տնտեսական ինտեգրացիա» աշխատությունը<sup>12</sup>: Հեղինակները ներկայացնում են այդ ուղղությամբ կատարված հետազոտությունները, ուսումնասիրում են տնտեսական ինտեգրման էությունը և սկզբունքները, ինչպես նաև ներկայացնում են այժմ ձևավորված ու գործող տնտեսական միությունները՝ Եվրոմիությունը և NAFTA-ն: Ուսումնասիրելով ՀՀ տնտեսական ինտեգրման հիմնախնդիրները՝ հեղինակները բացահայտում են ՀՀ-ի տնտեսական հարաբերությունները հարևան երկրների՝ Վրաստանի, Իրանի և Թուրքիայի հետ: Հիմնվելով ՀՀ միջազգային առևտրի մեջ ընդգրկված ապրանքատեսակների ուսումնասիրության վրա, առանձնացնում են այն ապրանքատեսակները, որոնք ունեն պահանջարկ հարևան երկրների շուկաներում:

ՀՀ հիմնական մրցակցային առավելություններն են ուսումնասիրվել Գ. Ղարիբյանի, Ա. Մարկոսյանի, Բ. Ավագյանի «Համաշխարհային տնտեսական ձգնաժամի ազդեցությունը ՀՀ-ի տնտեսության վրա և հակաձգնաժամային միջոցառումները» աշխատությունում<sup>13</sup>: Ներկայացվում են ՀՀ մրցունակության առավելություններն ու թերությունները՝ հիմնված 2009թ.-ի համաշխարհային տնտեսական համաժողովի տվյալների վրա: Տրվում են նաև ՀՀ մրցունակության 10 ուշագրավ առավելություններն ու թերությունները 2010-2012 թվականներին: Առաջադրվում են ձգնաժամի պայմաններում ՀՀ-ի համար հետևյալ երեք խնդիրները.

1. Եթե ձգնաժամի երկրորդ փուլի չլինի, ապա ի՞նչ շարժիչ ուժեր կվերականգնեն տնտեսությունը:

2. Եթե ձգնաժամի երկրորդ փուլի սկսվի, ապա ինչպիսի՞ գործիքներ և քաղաքականություն պետք է կիրառվի:

3. Ինչպիսի՞ն պետք է լինի տնտեսության զարգացման ռազմավարական մոդելը, որը հնարավորություն կտա ստեղծել կայուն տնտեսական աճի հիմքեր»<sup>14</sup>:

Արտահանման գերխնդիրներին է ուշադրություն դարձրել Հ. Սարգսյանը<sup>15</sup> ուսումնասիրելով ՀՀ զարգացման առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված միջազգային առևտրի գործընթացը: Հեղինակները առանձնացնում են ՀՀ-ի տնտեսության կախվածությունը արտաքին տրանսֆերտներից և փոխանակման կուրսից: Միջազգային առևտրի գնահատմամբ, հիմնված արտահանման հակվածության գործոնների համեմատության վրա, գնահատվում են հարևան երկրների՝ Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Իրանի արտահանման հակվածության գործոնները և կատարվում է դրանց համեմատական վերլուծություն: Այսպիսով, հեղինակները, «ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման նպատակադրումներից ելնելով,

<sup>12</sup> Թադևոսյան Ջ.Ա., Գալստյան Դ.Ո., Միջազգային տնտեսական ինտեգրացիա, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2006թ, էջ 6-21, էջ37-52, էջ81-95, էջ132-158

<sup>13</sup> Ղարիբյան Գ., Մարկոսյան Ա, Ավագյան Բ., Համաշխարհային տնտեսական ձգնաժամի ազդեցությունը ՀՀ-ի տնտեսության վրա և հակաձգնաժամային միջոցառումները, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2011, էջ 126-136

<sup>14</sup> էջ 129

<sup>15</sup> Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Տնտեսական վերափոխումների ընթացքը և ձգնաժամը Հայաստանում, «Արդարություն» մատենաշար-թիվ 6, Խորհրդաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 2-9

Սարգսյան Հ., Անցումային երկու տասնամյակը Հայաստանի Հանրապետությունում. իրողություններ և մարտահրավերներ, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2011, էջ 13-31

պահանջում են, որ ընթացիկ տասնամյակի բնագիծը լինի մուտքը զարգացման 3-րդ փուլ: Այն կպահանջի մինչև 2020 թվականը ՀՆԱ-ի միջին տարեկան 7-8% աճ՝ բնակչության շատ փոքր աճի պայմաններում»<sup>16</sup>:

Արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցության ուսումնասիրությանն է նվիրված Հ. Սարգսյանի, Ա. Մարկոսյանի և Բ. Ավագյանի հետազոտությունը<sup>17</sup>: Ուսումնասիրվում է ՀՀ և ԼՂՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008-2012թթ.: Ջարգացնելով այդ ուսումնասիրությունները հետազոտվում են ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշները, ինչպես նաև դրանց կառուցվածքը ըստ միությունների, այդ թվում՝ ԱՊՀ, ԵվրԱզԷՍ, ԵՄ և այլ երկրներ 1996-2012թթ.: Ցույց է տրվում, որ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ ԱՊՀ երկրների բաժինը ունեցել է նվազման միտում: Ինչ վերաբերվում է ԵվրԱզԷՍ-ի երկրների բաժնին, ապա այն նույնպես նվազել է: Այս ամենի հաշվին աճել է ԵՄ երկրների բաժինը: Ուշադրության են արժանի ՀՀ արտաքին առևտրի առևտրաշրջանառության համեմատական առավելությունների գործակիցները ըստ երկրների 1996-2012թթ.: Հաշվարկների արդյունքներից հետևում է, որ «ՀՀ-ի՝ Մաքսային միությանը միանալու որոշման հիմքում չի կարող լինել տնտեսական բաղադրիչով հիմնավորվածությունը, այն ավելի շատ խարսխվում է քաղաքական և աշխարհաքաղաքական հանգամանքների և պայմանների վրա»:<sup>18</sup> Մաքսային միությունը դիտարկվել է «որպես տնտեսական ինտեգրման առավել արդյունավետ մոդել»՝ հետխորհրդային երկրների համար<sup>18</sup>: Հետազոտության արդյունքում բացահայտվել է այն ապրանքների ցանկը, «որոնց նկատմամբ ՄՄ-ի կողմից սահմանված ներմուծման միասնական մաքսատուրքերի կիրառումը բացասական ազդեցություն կունենա»<sup>19</sup>: Հեղինակների կողմից առաջարկված են մաքսատուրքերի կարգավորման մոտեցումներ:

Անցումային երկրների տնտեսության մրցունակության բարձրացումը նշանակալի դեր է կատարում տնտեսական աճի ապահովման գործում<sup>20</sup>: Վ. Բոստանջյանի և Տ. Մուսայեյանի կողմից առաջարկվում են պետության քաղաքականության այն ուղղությունները, որոնք կոչված են ապահովել մրցակցության կարգավորման գործընթացը: Այս աշխատությունում հեղինակները առաջարկում են գործնական այնպիսի մոտեցումներ, որոնք կկարգավորեն հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը ՀՀ-ում:

ՀՀ մրցունակության բարձրացման ուղիներից մեկը հիմնված է տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործման վրա<sup>21</sup>: Ա. Ավագյանի և Գ. Ղամբարյանի հետազոտությունում առաջարկվում է ՀՀ վերամշակող արդյունաբերության բազային գնահատման սանդղակ, ինչպես նաև բազային գնահատման ինդեքսներ: Հեղինակների կողմից ուսումնասիրված առանձնահատկությունները հնարավորություն են տալիս

<sup>16</sup> Է Սարգսյան Հ., Անցումային երկու տասնամյակը Հայաստանի Հանրապետությունում. իրողություններ և մարտահրավերներ, Տարեգիրք 2011, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2011, ջ 26

<sup>17</sup> Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան, Բ. Ավագյան, ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցությունների հիմնախնդիրները, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013, էջ 92-118

<sup>18</sup> Ս. Ավետիսյան, Հ. Ծպենցյան, Ա. Ավետիսյան, ՀՀ պարենային անվտանգության հնարավոր ռիսկերի մաքսային միությանն անդամակցության պայմաններում, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2013, էջ 27-33

<sup>19</sup> էջ 32

<sup>20</sup> Վ. Բոստանջյան, Տ. Մուսայեյան, Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2013, էջ 204-217

<sup>21</sup> Ա. Ավագյան, Գ. Ղամբարյան, ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, էջ 252-262

եզրակացնել, որ ՀՀ-ի տնտեսության << արտահանումը խիստ ռեսուրսախնտենսիվ է և մի քանի ոլորտներում կենտրոնացված>><sup>22</sup>:

Երկրների ինտեգրման գործընթացը ունի կարևորագույն նշանակություն նրանց տնտեսական աճի ապահովման համար<sup>23</sup>: Թ. Թորոսյանի, Լ. Սարգսյանի հետազոտությունը նվիրված է Իրանի Իսլամական Հանրապետության դերի ուսումնասիրությանը տարածքային տնտեսական համակարգում: Հեղինակները ուսումնասիրում են ՀՀ-ԻԻՀ փոխադարձ առևտուրը ըստ առանձին ապրանքախմբերի և առաջարկում են Բելլա Բալասասայի կողմից սահմանված համեմատական առավելությունների ինդեքսը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրները Եվրասիական տնտեսական միության շրջանակում», առաջարկվում են տնտեսագիտամաթեմատիկական մոդելներ, հիմնված տնտեսական միության երկրների միջև հեռավորությունը, արտահանումը և ներմուծումը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումները գնահատող գործոնների վրա:

ՀՀ-ն, լինելով փոքր երկիր և ունենալով տնտեսական և քաղաքական խնդիրներ կայացրեց իր որոշումը ԵԱՏՄ-ին միանալու վերաբերյալ: ՀՀ-ի ԵԱՏՄ-ին միանալու որոշումը՝ որպես փոքր երկիր, որն ունի տնտեսական և քաղաքական խնդիրներ համաձայնեցված է որոշակի գործոնների հետ, որոնք պետք է հաշվի առնվեն քաղաքական գործընթացներով պայմանավորված և դրանց ազդեցության ներքո գտնվող տնտեսական խնդիրների լուծման համար:

Համաձայն պայմանագրի<sup>24</sup> ԵԱՏՄ հիմնադրամը նպատակաուղղված է անդամ երկրների <<ընդհանուր շուկայի>> ստեղծմանը: Ռիստի միասնական տնտեսական քաղաքականության իրականացման համար ԵԱՏՄ անդամ երկրների առջև առաջանում են մակրոտնտեսական և միկրոտնտեսական բնույթ ունեցող հիմնախնդիրներ: Այդ խնդիրների շարքում կարևորվում են ՀՀ-ին բնորոշ այնպիսի հիմնախնդիրներ որոնք պայմանավորված են.

• ՀՀ տնտեսության փոքրությամբ և ԵԱՏՄ-ից դուրս չմնալու անհրաժեշտությամբ: Ինչպես ցույց է տվել նտեսական համագործակցության գործընթացների պատմական փորձը, նման իրավիճակում կարող են հայտնվել տնտեսական միությանը միացող փոքր տնտեսությունները,

• ՀՀ-ի արտահանման մրցունակության համեմատական առավելության ապահովմամբ,  
• ՀՀ-ի կողմից ներկրման գործընթացում էներգակիրների գների կարգավորմամբ,  
• ՌԴ-ից տնտեսական կախվածության նվազեցմամբ և տնտեսական համագործակցության գործընթացի զարգացմամբ և խորացմամբ:

ՀՀ-ի ԵԱՏՄ-ին ինտեգրման արդյունավետությունը կախված է այն բանից, թե ինչպես է ազդում ինտեգրման գործընթացը ԵԱՏՄ երկրների և ՀՀ-ի տեխնոլոգիական զարգացման և համատեղ ձեռնարկությունների և վերազգային կորպորացիաների ստեղծման վրա, ինչպես նաև ինտեգրման արդյունքում ՀՀ-ի և ԵԱՏՄ-ի միջև առևտրային հոսքերի զարգացման վրա:

<sup>22</sup> էջ 258

<sup>23</sup> Թ. Թորոսյան, Լ. Սարգսյան, Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանային տնտեսական համակարգում, Տարգիրք, 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2013, էջ 378-387

<sup>24</sup> Договор ЕАЭС [www.eaeumion.org/#info](http://www.eaeumion.org/#info)

ՀՀ տնտեսական համագործակցության ուսումնասիրության համար ուսումնասիրվել է հետխորհրդային տարածքի երկրների տնտեսական համագործակցությունը նվիրված աշխատությունները, նվիրված Ուկրաինայի և Տաջիկստանի տնտեսություններին:<sup>25</sup>

**ՀՀ Տնտեսական համագործակցությունը էներգակիրների բնագավառում.** <<Քողարկված սուբսիդավորման>> գնահատման համար ուսումնասիրենք ԱՊՀ և ԵՄ երկրների բնական գազի սպառման կախվածությունը միջազգային գներից:

ՀՀ-ի, ինչպես նաև մյուս ԱՊՀ երկրների համագործակցությունը էներգակիրների բնագավառում իրականացվում է հիմնականում ՌԴ-ի հետ համագործակցության սահմաններում: Այդ համագործակցության վրա իր ազդեցությունն ունի ՌԴ-ի տնտեսությունը, որը մեծամասամբ կախված է նավթի և բնական գազի միջազգային գներից՝ դրանցով է պայմանավորված ՌԴ-ի ՀՆԱ-ի աճը: Նշանայկենք.

*LnPr* - բնական գազի միջազգային գնի բնական լոգարիթմը (ԱՄՆ դոլար 1 մլրդ խորանարդ մետրի համար),

*LnCONSCIS* - ԱՊՀ երկրների, բացառությամբ Ռուսաստանի և Ղազախստանի, ռուսական բնական գազի սպառման (ԱՄՆ դոլար 1 մլրդ խորանարդ մետրի համար)բնական լոգարիթմը,

*LnCONSEU* - Եվրամիության երկրների բնական գազի սպառման (ԱՄՆ դոլար 1 մլրդ խորանարդ մետրի համար) բնական լոգարիթմը:

Այսպիսով, ՌԴ-ի ՀՆԱ-ի լազային կախվածությունը բնական գազի միջազգային գներից ներկայացված է ստորև տրված աղյուսակում: Ռեգրեսիայի մոդելը նշանակալի է. *R*-քառակուսու և ճշգրտված *R*-քառակուսու գնահատականները նշանակալի են և հավասար են 0.976691 և 0.972029 համապատասխանաբար, *F*-վիճակագիրը հավասար է 209.5102, *Prob*(*F*-statistic) = 0.000000, իսկ *DW*-վիճակագիրը նույնպես նշանակալի է և հավասար է 0.223157: Ինչ վերաբերվում է ռեգրեսիայի գործակիցներին, ապա դրանք նույնպես նշանակալի են: Այս ամենը հնարավորություն է տալիս պնդելու, որ ստացված հավասարման միջոցով կարելի է գնահատել ՌԴ-ի ՀՆԱ-ի աճը, կախված բնական գազի միջազգային գներից: Այսպես, բնական գազի ընթացիկ, մեկ և երկու լազերի գները ունեն դրական ազդեցություն ՌԴ-ի ՀՆԱ-ի աճի վրա:

Dependent Variable: Ln(GDPRU)

Method: Least Squares

Date: 05/07/15 Time: 11:59

Sample: 1995 2013

Included observations: 39

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
Ln(T)	0.389876	0.052649	7.414065	0.0000
Ln(T_101)	0.527111	0.076627	6.881028	0.0000
Ln(T_201)	0.311024	0.065282	4.762966	0.0000
C	6.365155	0.084168	75.62402	0.0000
R-squared	0.976691	Mean dependent var		8.302366
Adjusted R-squared	0.972029	S.D. dependent var		0.797767
S.E. of regression	0.133422	Akaike info riterion		-1.005934
Sum squared resid	0.267022	Schwarz criterion		-0.807105
Log likelihood	13.55638	F-statistic		209.5102
Durbin-Watson stat	0.223157	Prob(F-statistic)		0.000000

<sup>25</sup> www.copsmodels.com/gempack.html

Ուսումնասիրենք նաև ԱՊՀ և այլ երկրների ՌԴ-ի բնական գազի սպառման կախվածությունները միջազգային գներից: ԱՊՀ երկրների սպառման կախվածությունը ներկայացված է ստորև տրված աղյուսակում:

Dependent Variable: LNCONSCIS

Method: Least Squares

Date: 05/26/15 Time: 14:38

Sample: 2000:1 2012:4

Included observations: 52

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LNPR	0.108155	0.017302	6.259475	0.0000
C	4.074954	0.196628	20.72422	0.0000
R-squared	0.643938	Mean dependent var		6.507733
Adjusted R-squared	0.626816	S.D. dependent var		2.152758
S.E. of regression	1.142744	Akaike info criterion		3.017826
Sum squared resid	1.018792	Schwarz criterion		4.942778
Log likelihood	-28.46347	F-statistic		118.4057
Durbin-Watson stat	0.278770	Prob(F-statistic)		0.000000

Ստացված հավասարումը ցույց է տալիս, որ ԱՊՀ երկրների սպառումը, արտահայտված ԱՄՆ դոլարով աճում է, կախված ՌԴ-ի բնական գազի միջազգային գներից: Հավասարման վիճակագրական գնահատականները պայմանավորում են ստացված մոդելի նշանակալիությունը. R-քառակուսին և ճշգրտված R-քառակուսին նշանակալի են և հավասար են 0.643938 և 0.626816 համապատասխանաբար: Durbin-Watson վիճակագիրը նույնպես նշանակալի է և հավասար է 0.278770, իսկ Prob(F-statistic)=0.000000 և F-statistic= 118.4057 պայմանավորում են այն, որ հավասարումը ունի բարձր նշանակալիություն: Ռեգրեսիայի գործակիցները նշանակալի են, քանի որ դրանց Ստյուդենտի վիճակագրերը բավարարում են նշանակալիության պայմաններին: Այլ երկրների սպառման կախվածությունը ՌԴ-ի բնական գազի միջազգային գներից ներկայացված է ստորև տրված աղյուսակում:

Dependent Variable: LNOTHR

Method: Least Squares

Date: 05/26/15 Time: 14:40

Sample: 2000:1 2012:4

Included observations: 52

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LNPR	0.052257	0.007796	6.724229	0.0000
C	2.239586	0.346832	6.457260	0.0000
R-squared	0.612459	Mean dependent var		5.513651
Adjusted R- squared	0.597292	S.D. dependent var		1.250874
S.E. of regression	1.251787	Akaike info criterion		3.117233
Sum squared resid	1.169827	Schwarz criterion		4.192281
Log likelihood	-21.048070	F-statistic		97.63099
Durbin-Watson stat	0.188990	Prob(F-statistic)		0.000000

Ստացված հավասարումը ցույց է տալիս, որ այլ երկրների սպառումը, արտահայտված ԱՄՆ դոլարով աճում է, կախված ՌԴ-ի բնական գազի միջազգային գներից: Հավասարման վիճակագրական գնահատականները պայմանավորում են ստացված

մոդելի նշանակալիությունը. R-քառակուսին և ճշգրտված R-քառակուսին նշանակալի են և հավասար են 0.612459 և 0.597292 համապատասխանաբար: Durbin-Watson - վիճակագիրը նույնպես նշանակալի է և հավասար է 0.188990, իսկ Prob(F-statistic)= 0.000000 և F-statistic= 97.63099 պայմանավորում են այն, որ հավասարումը ունի բարձր նշանակալիություն: Ռեգրեսիայի գործակիցները նշանակալի են, քանի որ դրանց Ստյուդենտի վիճակագրերը բավարարում են նշանակալիության պահանջներին:

Այսպիսով, ԱՊՀ երկրների բնական գազի սպառման կախումն արտահայտող հավասարումով հնարավոր է գնահատել Ռուսաստանի վճարման փոփոխությունները (տոկոսներով և պայմանական գնով) «քողարկված սուբսիդավորման» իրականացման արդյունքում՝ կախված բնական գազի միջազգային գնի նվազումից (տոկոսներով):

*Աղյուսակ 1*

Բնական գազի սպառման գնի նվազեցումը ԱՊՀ երկրներին տրված <<քողարկված սուբսիդիաների>> արդյունքում<sup>26</sup>

Սպառված բնական գազի գինը նախքան <<քողարկված սուբսիդիաների>> կիրառումը	<<Քողարկված սուբսիդիաները>> /տոկոս/	<<Քողարկված սուբսիդիաները>> /ԱՄՆ դոլար/
300000000	5	1659680
300000000	10	3399175.9
300000000	15	5227096.9
300000000	20	7153557.7

Այլ երկրների բնական գազի սպառման կախումն արտահայտող հավասարումով հնարավոր է գնահատել Ռուսաստանին վճարման փոփոխությունները (տոկոսներով և պայմանական գնով) գնի բարձրացման արդյունքում՝ կախված բնական գազի միջազգային գնի բարձրացումից (տոկոսներով):

*Աղյուսակ 2*

Բնական գազի սպառման գնի բարձրացումը այլ երկրների համար<sup>27</sup>

Սպառված բնական գազի գինը նախքան գնի բարձրացումը	Գնի աճը /տոկոս/	Սպառված բնական գազի գնի աճը /ԱՄՆ դոլար/
300000000	5	765864.2
300000000	10	1497914
300000000	15	2199083
300000000	20	72871933

Համաձայն «Գազպրոմ» ԲԲԸ տվյալների, նախկին ԽՍՀՄ երկրների գազի իրացման գինը 2012թ.-ին կազմել է 258 ԱՄՆ դոլար հազար խոր. մետրի համար (առանց ԱԱՀ, ակցիզի և մաքսային տուրքերի) և 336 ԱՄՆ դոլար հազար խոր. մետրի համար՝ ներառելով 30% մաքսային տուրք: Հայաստանում գազի իրացման գների տարբերությունը գնի իջեցումից առաջ և դրանից հետո կազմել է 69 ԱՄՆ դոլար հազար խոր. մետրի համար: Այսպիսով «Գազպրոմ» ԲԲԸ-ն չի ստանա՝ 69 ԱՄՆ դոլար \*2,5 \*10<sup>9</sup>=172,5 մլն ԱՄՆ դոլար տարեկան, 2014-2018թթ. տարեկան 2,5 մլրդ խոր. մետր գազի մատակարարման համար: ՀՀ ՀՆԱ-ն

<sup>26</sup> Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից  
<sup>27</sup> Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից

գազի մատակարարման գնի իջեցման հաշվին կավելանա 172,5 մլն ԱՄՆ դոլար տարեկան 2014-2018թթ. ընթացքում:

Գազի ներկրման 30% մաքսային տուրքի հաշվի առնման պայմաններում Հայաստանը պետք է վճարի  $0,3 \cdot 189 \cdot 2,5 \cdot 10^9 = 141,8$  մլն ԱՄՆ դոլար տարեկան մաքսային տուրք 2014-2018թթ. ընթացքում: ՀՀ ՀՆԱ-ի փոփոխությունները տոկոսներով ԵԱՏՄ կազմում ներկայացված են աղյուսակ 3–ում:

*Աղյուսակ 3*

ՀՀ ՀՆԱ-ի փոփոխությունները տոկոսներով՝ կախված ԵԱՏՄ ՀՆԱ-ի մասնաբաժնից<sup>28</sup>

տարի	ՀՆԱ-ն առանց գազի գնի իջեցման	Մասնաբաժին- % ԵԱՏՄ կազմում առաջին տող և ՀՀ ՀՆԱ-ն գազի գնի իջեցումից հետո (մլն ԱՄՆ դոլար)									
		0,1	0,2	0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1
2014	10277	10474	10488	10502	10516	10530	10545	10559	10573	10587	10601
2015	10590	10777	10791	10805	10819	10833	10848	10862	10876	10890	10904
2016	11264	11451	11465	11479	11493	11507	11522	11536	11550	11564	11578
2017	12095	12282	12296	12310	12324	12338	12353	12367	12381	12395	12409
2018	13110	13297	13311	13325	13339	13353	13368	13382	13396	13410	13424

*Աղյուսակ 4*

Հայաստանի ՀՆԱ-ի տոկոսային փոփոխությունը ըստ տվյալ տարվա ՀՆԱ-ի նկատմամբ կախված մասնաբաժնից 2014-2018 թթ.<sup>29</sup>

ԵԱՏՄ-ում ՀՀ մասնաբաժինը (%)	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
0,1	101,8147	101,7628	101,6573	101,5434	101,42
0,2	101,9526	101,89669	101,7832	101,6607	101,5321
0,3	102,0904	102,03059	101,9091	101,7779	101,6403
0,4	102,2282	102,16449	102,035	101,8952	101,7484
0,5	102,3661	102,29839	102,1609	102,0124	101,8566
0,6	102,5039	102,43229	102,2868	102,1296	101,9648
0,7	102,6418	102,56619	102,4126	102,2469	102,0729
0,8	102,7796	102,70009	102,5385	102,3641	102,1811
0,9	102,9175	102,83399	102,6644	102,4814	102,2892
1	103,0553	102,96789	102,7903	102,5686	102,3974

ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր երկրի մասնաբաժինը հաշվարկվել է այդ երկրի ՀՆԱ-ի և ԵԱՏՄ երկրների գումարային ՀՆԱ-ի հարաբերությամբ (Ուկրաինան ներառված է ԵԱՏՄ անդամ երկրների շարքը՝ որպես պոտենցիալ անդամ<sup>\*)</sup>):

Երրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ տնտեսական համագործակցության ուղիները», նվիրված է ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ տնտեսական

<sup>28</sup> Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից

<sup>29</sup> Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից

համագործակցության արդյունավետության ուսումնասիրությանը: Միջազգային առևտրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների մոդելների մշակմամբ առաջարկվել են Եվրասիական տնտեսական միության հետ ՀՀ տնտեսական համագործակցության արդյունավետության գնահատականները: Առաջարկվել են տնտեսական համագործակցության գործընթացի կարգավորման խնդիրների լուծման մոտեցումները, որոնք հիմնված են ՀՀ և Եվրասիական տնտեսական միության երկրների միջև միջազգային ներդրումների տնտեսագիտամաթեմատիկական մոդելների վրա:

Հայաստանի Հանրապետությունը 1990-ական թվականներին անկախացավ և միաժամանակ կորցրեց նախկինում ստեղծված տնտեսական կապերը: Դրանց պահպանմանը որոշ չափով և որոշ երկրների հետ նպաստեց ԱՊՀ երկրների ստեղծումը: Սակայն արտահանման հնարավորությունները սահմանափակվեցին ու, հետևաբար, առաջացավ տնտեսական կապերի ստեղծման անհրաժեշտություն: ՀՀ-ից ԵՄ և ԱՊՀ երկրներ առաջարկվող արտահանման մոդելները հիմնված են ռեգրեսիոն մոդելավորման վրա: Ցույց է տրվում, որ ՀՀ-ից ԵՄ արտահանումը ԵՄ-ի համախառն ներքին արդյունքի վրա ազդեցություն չի գործում, քանի որ ստացված ռեգրեսիոն մոդելը նշանակալի չէ: Սակայն պատկերը փոխվում է, երբ ուսումնասիրում ենք ԵՄ-ից ԱՊՀ ներմուծման մոդելը. այս դեպքում ԵՄ-ից ՀՀ ներմուծումը ազդում է ՀՀ-ի ՀՆԱ-ի վրա: Հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ-ից ԱՊՀ արտահանման մոդելը՝ հիմնված հեռավորության փոփոխականի և ներմուծող երկրի ՀՆԱ-ի վրա: Առաջարկվող մոդելը նշանակալի է:

Ուսումնասիրվում են ՀՀ-ում արտադրվող և արտահանվող ապրանքների համեմատական առավելության ինդեքսները ԵՄ և ԱՊՀ շուկաների օրինակով:

Ուսումնասիրվում են հետևյալ մոդելները.

Կատարենք հետևյալ նշանակումները.

Ln(EXPORTAM) – ՀՀ արտահանման բնական լոգարիթմը, IMPORT - ՀՀ ներմուծում, Ln(GDPAM) - ՀՀ ՀՆԱ-ի բնական լոգարիթմը, Ln(GDPCIS) - ԱՊՀ երկրի ՀՆԱ-ի բնական լոգարիթմը, Ln(GDPEU) - Եվրոմիության ՀՆԱ-ի բնական լոգարիթմը, Ln(DIST) –ՀՀ-ի և արտերկրի միջև հեռավորության բնական լոգարիթմը:

**ՀՀ և ԱՊՀ երկրների հետ միջազգային առևտրի մոդելներ.** Մոդել 1-ը նկարագրում է ՀՀ արտահանումը, կախված ՀՀ ՀՆԱ-ից և ԱՊՀ երկրների ՀՆԱ-ներից և ՀՀ և ԱՊՀ երկրի միջև հեռավորությունից: Մոդելը տրվել է հետևյալ կերպ.

Dependent Variable:Ln(EXPORTAM)

Method: Least Squares

Date: 06/02/15 Time: 15:05

Sample: 1 36

Included observations: 36

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
Ln(GDPCIS)	2.024025	0.255600	7.918728	0.0000
Ln(GDPAM)	1.976828	0.211005	9.372186	0.0000
Ln(DIST)	-0.748042	0.115771	-6.460337	0.0001
C	-21.76799	8.24275	-2.643118	0.0003
R-squared	0.669482	Mean dependent var		8.335832
Adjusted R-squared	0.638496	S.D. dependent var		0.764762
S.E. of regression	7.241443	Akaike info criterion		1.374865
Sum squared resid	49.31779	Schwarz criterion		1.550812
Log likelihood	-23.74757	F-statistic		21.60589
Durbin-Watson stat	0.653831	Prob(F-statistic)		0.000000

Ինչպես և սպասվում էր, որքան մեծ է երկրների միջև հեռավորությունը, այնքան փոքր է ՀՀ-ից արտահանման ծավալը: Միաժամանակ, որքան մեծ է ներմուծող տնտեսության ՀՆԱ-ն, այնքան մեծ է ՀՀ-ից արտահանման ծավալը: Ռեգրեսիոն մոդելը բնութագրվում է բավական բարձր բացատրող վիճակագրական ցուցանիշներով՝ այն հանդես է գալիս վիճակագրորեն նշանակալի  $R^2=0.669482$ ,  $F=21.60589$ , ճշգրտված  $R^2=0.638496$ , իսկ ռեգրեսիայի գործակիցների t վիճակագրերը նույնպես նշանակալի են՝  $\text{Prob}(F\text{-statistic})=0.000000$ : Ստացված ռեգրեսիայի գործակիցների արժեքները փաստում են այն, որ գրավիտացիոն մոդելի հիման վրա հնարավոր է գնահատել երկրների միջև հեռավորության ազդեցությունը արտահանման ծավալների վրա:

Ընդունենք, որ ՀՀ ՀՆԱ-ն և ԱՊՀ երկրի ՀՆԱ-ն և հեռավորությունը հավասար են 1 միավորի, և դրանց համապատասխանող արտահանումը ՀՀ-ից ԱՊՀ երկիր կազմել է 100%, ինչը համապատասխանում է 5546.776 հազար ԱՄՆ դոլար ՀՀ-ից միջին արտահանմանը ԱՊՀ երկիր: Այս վիճակը կանվանենք բազային: Այսպիսով, եթե

1. ՀՀ ՀՆԱ-ն 1 միավոր է, ԱՊՀ երկրի ՀՆԱ-ն հավասար է 1.05 միավորի, իսկ հեռավորությունը կազմում է 1 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ արտահանումը հավասար կլինի 105, 62 %, կամ 5858.437 հազար ԱՄՆ դոլար ՀՀ-ից միջին արտահանմանը ԱՊՀ երկիր: :

2. ՀՀ ՀՆԱ-ն 1.05 միավոր է, ԱՊՀ երկրի ՀՆԱ-ն հավասար է 1.1 միավորի, իսկ հեռավորությունը կազմում է 1.5 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ արտահանումը հավասար կլինի 27, 9 %, կամ 1635.038 հազար ԱՄՆ դոլար ՀՀ-ից միջին արտահանմանը ԱՊՀ երկիր:

Դրա պատճառը տրանսպորտային ծախսերն են, և ՀՀ-ի արտահանման միտումը կայանում է նրանում, որպեսզի արտահանի մոտ հեռավորություն ունեցող երկրներ:

ԱՊՀ-ից ՀՀ ներմուծման մոդելը նկարագրվել է հետյալ կերպ.

Dependent Variable:Ln(IMPORT)

Method: Least Squares

Date: 05/26/15 Time: 11:07

Sample(adjusted): 2000:1 2008:4

Included observations: 36 after adjusting endpoints

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
Ln(DIST)	-2.175240	0.402522	-5.420949	0.0001
Ln(GDPAM)	2.367444	0.321169	7.373012	0.0000
C	45.75603	21.60490	2.123747	0.0001
R-squared	0.70611	Mean dependent var		8.630177
Adjusted R-squared	0.703285	S.D. dependent var		3.435709
S.E. of regression	3.411082	Akaike info criterion		5.371591
Sum squared resid	383.9708	Schwarz criterion		5.503551
Log likelihood	-93.68864	F-statistic		91.25306
Durbin-Watson stat	0.686868	Prob(F-statistic)		0.000001

Այսպիսով, որքան մեծ է ՀՀ և ԱՊՀ երկրի միջև հեռավորությունը, այնքան փոքր է ՀՀ ներմուծման ծավալը: Ռեգրեսիոն մոդելը բնութագրվում է բավական բարձր բացատրող վիճակագրական ցուցանիշներով՝ այն հանդես է գալիս վիճակագրորեն նշանակալի  $R^2=0.70611$ ,  $F=91.25306$ , ճշգրտված  $R^2 = 0.703285$ , իսկ ռեգրեսիայի գործակիցների t վիճակագրերը նույնպես նշանակալի են,  $\text{Prob}(F\text{-statistic})=0.000001$ : Ստացված ռեգրեսիայի գործակիցների արժեքները փաստում են այն, որ գրավիտացիոն մոդելի

հիման վրա հնարավոր է գնահատել երկրների միջև հեռավորության ազդեցությունը արտահանման ծավալների վրա:

Ընդունենք, որ ՀՀ ՀՆԱ-ն և ԱՊՀ երկրի հեռավորությունները հավասար են 1 միավորի, և դրանց համապատասխանող ՀՀ ներմուծումը ԱՊՀ երկրից կազմել է 100%, ինչը համապատասխանում է 4107.19 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԱՊՀ երկրից: Այս վիճակը կանվանենք բազային: Այսպիսով, եթե

1. ՀՀ ՀՆԱ-ն 1.05 միավոր է, իսկ հեռավորությունը կազմում է 1 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ ներմուծումը հավասար կլինի 110, 47 %, կամ 4537.05 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԱՊՀ երկրից:
2. ՀՀ ՀՆԱ-ն 1.05 միավոր է, իսկ հեռավորությունը կազմում է 1.5 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ ներմուծումը հավասար կլինի 81.41 %, կամ 3343.72 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԱՊՀ երկրից:

Դրա պատճառը տրանսպորտային ծախսերն են, և ՀՀ-ի արտահանման միտումը կայանում է նրանում, որպեսզի հավասար պայմանների դեպքում ՀՀ ներմուծվի մոտ հեռավորություն ունեցող երկրներ:

**ՀՀ և ԵՄ երկրների հետ միջազգային առևտրի մոդելներ.** ՀՀ և ԵՄ երկրների արտահանման գրավիտացիոն մոդելը ունի հետևյալ տեսքը.

Dependent Variable: LN(IMPORTAM)  
 Method: Least Squares  
 Date: 05/26/15 Time: 12:11  
 Sample(adjusted): 2006:1 2014:4  
 Included observations: 88 after adjusting endpoints

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LN(DIST)	-0.264923	0.079674	-3.325087	0.0001
LN(GDPAM)	0.001413	0.000211	6.696682	0.2030
LN(GDPEU)	0.178272	0.044846	3.975204	0.0001
C	6.108014	1.44976	4.213121	0.0000
R-squared	0.624205	Mean dependent var		82.63077
Adjusted R-squared	0.620632	S.D. dependent var		11.43509
S.E. of regression	7.917759	Akaike info criterion		3.244631
Sum squared resid	7117.689	Schwarz criterion		4.420577
Log likelihood	-372.40336	F-statistic		86.77814
Durbin-Watsonstat	0.172726	Prob(F-statistic)		0.000000

Այսպիսով, որքան մեծ է երկրների միջև հեռավորությունը, այնքան փոքր է ՀՀ-ի ներմուծման ծավալը ԵՄ երկրից: Միաժամանակ, որքան մեծ է արտահանող տնտեսության ՀՆԱ-ն, այնքան մեծ է ՀՀ-ի ներմուծման ծավալը: Ռեգրեսիոն մոդելը բնութագրվում է բավական բարձր բացատրող վիճակագրական ցուցանիշներով՝ այն հանդես է գալիս վիճակագրորեն նշանակալի  $R^2=0.624205$ ,  $F=86.77814$ , ճշգրտված  $R^2=0.620632$ , իսկ ռեգրեսիայի գործակիցների t վիճակագրերը նույնպես նշանակալի են՝  $\text{Prob}(F\text{-statistic})=0.000000$ : Ստացված ռեգրեսիայի գործակիցների արժեքները հնարավորություն են տալիս փաստել այն, որ գրավիտացիոն մոդելի հիման վրա հնարավոր է գնահատել երկրների միջև հեռավորության ազդեցությունը ներմուծման ծավալների վրա:

Ընդունենք, որ ՀՀ ՀՆԱ-ն և ԱՊՀ երկրի ՀՆԱ-ն և հեռավորությունը հավասար են 1 միավորի, և դրանց համապատասխանող ՀՀ-ի ներմուծումը ԵՄ երկրից կազմել է 100%, ինչը համապատասխանում է 626.26 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԵՄ երկրից: Այս վիճակը կանվանենք բազային: Այսպիսով, եթե

1. ՀՀ ՀՆԱ-ն 1 միավոր է, ԵՄ երկրի ՀՆԱ-ն հավասար է 1.07 միավորի, իսկ հեռավորությունը կազմում է 1 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ ներմուծումը հավասար կլինի 101, 2 %, կամ 633.875 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԵՄ երկրից:

2. ՀՀ ՀՆԱ-ն 1.03 միավոր է, ԵՄ երկրի ՀՆԱ-ն հավասար է 1.7 միավորի, իսկ հեռավորությունը կազմում է 1.5 միավոր, ապա բազային վիճակի նկատմամբ արտահանումը հավասար կլինի 90.33 %, կամ 565.6714 հազար ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի միջին ներմուծմանը ԵՄ երկրից::

Դա կարելի է բացատրել այն բանով, որ ներմուծման հետ կապված տրանսպորտային ծախսերը բարձր են:

Ռեզրեսիայի հավասարումը նշանակալի է, իսկ ինչպես և սպասվում էր, հեռավորության փոփոխականի գործակիցը բացասական է, և ԱՊՀ երկրի և ՀՀ-ի ՀՆԱ-ների փոփոխականները դրական են:

Ապրանքների հիմնական խմբերում ՀՀ-ն ունի բացասական առևտրային հաշվեկշիռ ԵՄ տնտեսական շուկայի հետ: Ներմուծվող ապրանքները, որ առաջացնում են բացասական առևտրային հաշվեկշիռ կազմում են մեքենաշինության, քիմիական, վառելիքի արդյունաբերության արտադրանքը՝ ավելացած մեծ արժեք ունեցող կապիտալատար բարիքները: Առևտրային դրական հաշվեկշիռ ունեն սև մետալուրգիայի, գյուղատնտեսության արտադրանքի վերամշակման ապրանքները՝ փոքր ավելացած արժեք ունեցող ապրանքներ:

Բալասայի միջազգային առևտրի համեմատական առավելության ինդեքսը՝

$$RCA = \ln \left( \frac{X_i}{M_i} \right) \times \left( \frac{\sum_{i=1}^n X_i}{\sum_{i=1}^n M_i} \right) \times 100, \quad (1)$$

Աղյուսակ 5

ՀՀ ապրանքային խմբերի համեմատական առավելության արտահանման ցուցանիշները ըստ Բալասայի <sup>30</sup>(1) բանաձևի

		2011թ.	2012թ.	2013թ.
Կենդանի կենդանիներ	Ընդամենը	40,92489	24,67291	21,90826
	ԱՊՀ երկրներ	-169,484	24,09114	41,66209
	Այլ երկրներ	43,18204	24,67509	21,88741
Ձուկ և խեցգետնավորներ	Ընդամենը	47,6381	51,39699	74,51761
	ԱՊՀ երկրներ	114,9157	142,606	188,8336
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	128,9274	176,0645	146,1178
Սուրճ և այլ համեմունքներ	ԱՊՀ երկրներ	16,62784	23,44838	30,80671
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսեր իմաստերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	36,98554	56,3565	31,4885
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	Ընդամենը	36,64985	40,92662	44,69906
	ԱՊՀ երկրներ	46,24639	58,40461	65,62243
	Այլ երկրներ	11,33525	-11,0419	5,55016

<sup>30</sup> Տվյալները ստացվել են հեղինակի կողմից

աղյուսակ 5-ի շարունակություն

Հանքաքար, խարամ և մոխիր	Ընդամենը	144,2083	197,5271	189,6726
	Այլ երկրներ	147,8842	214,7946	202,5129
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	Ընդամենը	-6,70018	3,214303	5,723756
	ԱՊՀ երկրներ	4,884477	36,48438	26,60517
	Այլ երկրներ	-8,90463	-2,09367	2,772475
Կոշիկ, զուգագուլպա	ԱՊՀ երկրներ	24,21155	29,42947	39,39847
Իրեր՝ քարից, գիպսից	ԱՊՀ երկրներ	12,01674	30,41057	41,55703
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՀ երկրներ	-12,6254	37,25544	65,30923
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	Ընդամենը	107,5557	109,2339	111,7033
	ԱՊՀ երկրներ	-171,913	-126,883	5,744915
	Այլ երկրներ	125,4223	119,4246	125,3057
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	Ընդամենը	-3,2466	-0,99032	2,321201
	Այլ երկրներ	40,7875	43,98693	45,15756
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	Ընդամենը	148,7083	149,8582	174,7444
	ԱՊՀ երկրներ	-	84,96764	-
	Այլ երկրներ	151,2972	151,7731	174,7444
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ	Ընդամենը	-20,6728	-87,4471	0,847004
	ԱՊՀ երկրներ	-1,94888	3,654213	55,2894
	Այլ երկրներ	-171,79	-102,709	0,749065
Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	Ընդամենը	-7,42854	-21,0036	24,31641
	ԱՊՀ երկրներ	85,53134	115,7913	103,1567

Աղյուսակ 5-ում տրված են նշված ապրանքային խմբերի արտահանման ծավալի և լրիվ արտահանման ծավալի հարաբերությունը արտահայտված տոկոսներով:  
Հայտնի է նաև Բալասսայի համեմատական առավելության հետևյալ ինդեքսը՝

$$RCA_{ij} = \frac{\frac{x_{ij}}{X_i}}{\frac{x_{aj}}{X_a}}, \quad (2)$$

որտեղ՝  $x_{ij}$ -ն  $i$ -րդ երկրից  $j$ -րդ ապրանքի արտահանումն է,  $X_i$ -ն  $i$ -րդ երկրի ընդհանուր արտահանումը,  $x_{aj}$ -ն տվյալ  $j$ -րդ ապրանքի արտահանման ծավալը ընտրված տարածաշրջանում,  $X_a$ -ն ընտրված տարածաշրջանի ամբողջ արտահանումը:

Աղյուսակ 6

«Ապրանքային խմբերի արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի բանաձևի»  
31(2)

		2011թ.	2012թ.	2013թ.
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ ըրկրներ	0,001449	0,982199	1,79658
	Այլ երկրներ	1,072639	1,000067	0,999382
Զուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ ըրկրներ	8,085581	16,70974	29,68172
	Այլ երկրներ	0,184421	0,097408	0,057174
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ ըրկրներ	167,6947	366,5284	95,22022
	Այլ երկրներ	0,081148	0,044759	0,141425
Սուրճ և այլ համեմունքներ	ԱՊՀ ըրկրներ	9,070074	10,46695	14,17352
	Այլ երկրներ	0,62886	0,600725	0,522795

<sup>31</sup> Տվյալները ստացվել են հեղինակի կողմից

աղյուսակ 6-ի շարունակություն

Բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի մասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ ըկրներ	5,210007	5,875145	2,942401
	Այլ երկրներ	0,354497	0,245837	0,234703
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	ԱՊՀ ըկրներ	1,347339	1,715348	1,859993
	Այլ երկրներ	0,455464	0,200995	0,225292
Հանքաքար, խարամ և մոխիր	ԱՊՀ ըկրներ	0,003336	-	-
	Այլ երկրներ	1,120976	1,704237	1,463506
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	ԱՊՀ ըկրներ	1,43318	2,793183	1,85768
	Այլ երկրներ	0,933808	0,848845	0,916189
Կոշիկ, զուգագուլպա	ԱՊՀ ըկրներ	46,72618	30,89627	44,94271
	Այլ երկրներ	0,167358	0,086025	0,194278
Իրեր՝ քարից, գիպսից	ԱՊՀ ըկրներ	4,008042	6,712389	9,614911
	Այլ երկրներ	0,510746	0,387635	0,215405
Բնական կամ արհեստական մարգարիտ , թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՀ ըկրներ	0,738923	3,270931	10,89565
	Այլ երկրներ	1,066714	0,861117	0,745095
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ ըկրներ	0,00017	0,000682	0,043168
	Այլ երկրներ	1,742035	1,36975	1,49696
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ ըկրներ	0,000542	0,001733	0,005451
	Այլ երկրներ	3,92744	4,009351	3,56262
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	ԱՊՀ ըկրներ	-	0,133197	-
	Այլ երկրներ	1,083751	1,061294	1
Թռչող և տիեզերական ապարատներ	ԱՊՀ ըկրներ	1,789055	16,94893	5,426737
	Այլ երկրներ	0,009144	0,622425	0,996962
Արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրեր	ԱՊՀ ըկրներ	17,95635	70,08776	11,5802
	Այլ երկրներ	0,430317	0,337657	0,3116

Այսպիսով, հիմնվելով Բալասայի ինդեքսի հատկությունների վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ն ունի առևտրի համեմատական մրցակցային առավելություն ԱՊՀ արտահանվող հետևյալ ապրանքային խմբերի նկատմամբ՝ կենդանի կենդանիներ, ձուկ և խեցգետնավորներ, կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ, սուրճ և այլ համեմունքներ, բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի մասերի վերամշակումից ստացվող մթերք, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, հանքաքար, խարամ և մոխիր, աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ, կոշիկ և զուգագուլպա, իրեր քարից և գիպսից, բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թռչող և տիեզերական ապարատներ, արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրեր, իսկ այլ երկրներ՝ ալյումին և դրանից պատրաստված իրեր, պղինձ և դրանից պատրաստված իրեր և այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և իրեր դրանցից:

**Աբուիհոի ինդեքսը**<sup>32</sup>. Աբուիհոն առաջարկել է հետևյալ ինդեքսը՝

$$A_{ki} = 100 \times \left[ \frac{x_{ki} / \sum_{k=1}^M x_{ki}}{\sum_{i=1}^M x_{ki} / \sum_{i=1}^N \sum_{k=1}^M x_{ki}} \right] / \left[ \frac{m_{ki} / \sum_{k=1}^M m_{ki}}{\sum_{i=1}^N m_{ki} / \sum_{i=1}^N \sum_{k=1}^M m_{ki}} \right], \quad (3)$$

որտեղ  $x_{ki}$ –ն նշանակում է  $k$ -րդ ապրանքի արտահանումը  $i$ -րդ երկիր, իսկ  $m_{ki}$ –ն՝  $k$ -րդ ապրանքի ներմուծումը  $i$ -րդ երկրից: Ինչպես տեսնում ենք, ցուցանիշ (3) նման է Բալասայի արտահանման և ներմուծման գնահատման ցուցանիշին: Ցուցանիշ (3) համարիչում տրված է  $k$ -րդ ապրանքի մասը  $i$ -րդ երկրի արտահանման մեջ, հարաբերած

<sup>32</sup> [http://www.suomenpankki.fi/bofit\\_en/tutkimus/seminaarit/tiistai/Documents/trade.pdf](http://www.suomenpankki.fi/bofit_en/tutkimus/seminaarit/tiistai/Documents/trade.pdf)

երկրի *k*-րդ ապրանքի արտահանման մասին ընդհանուր արտահանման նկատմամբ: Նշված ցուցանիշի հայտարարը և համարիչը արտահայտում են ներմուծման նույն մեծությունները: Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ (3) ցուցանիշը գնահատում է երկրի մասնագիտացման աստիճանը: Աքուինոյի ինդեքսը հնարավորություն է տալիս վերացնել Բալասայի ցուցանիշի թերությունները, քանի որ վերջինս օգտագործում է միայն արտահանման գործոնը: Սակայն հարկավոր է նշել, որ Աքուինոյի ինդեքսը (3) որոշ սահմանափակումներ ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս ստանալ Բալասայի ցուցանիշի արտահանմանը և ներմուծմանը վերաբերող արժեքները:

Աղյուսակ 7

«Ապրանքային խմբերի համեմատական առավելության արտահանման ցուցանիշները ըստ Աքուինոյի»<sup>33</sup>(3) բանաձևի

		2011թ.	2012թ.	2013թ.
-				
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ երկրներ	0,1185	133.71	162.92
	Այլ երկրներ	87,718	136.14	90.63
Ձուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ երկրներ	536.75	996.8123	565.42
	Այլ երկրներ	12,24	5.81	1.08
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	149396.9	170711.7	20657.31
	Այլ երկրներ	72,293	20.84652	30.68
Սուրճ և այլ համեմունքներ	ԱՊՀ երկրներ	14311,15	15489.26	13991.94
	Այլ երկրներ	992,24	888.9676	516.09
Բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի մասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	2508,78	1766.776	590.94
	Այլ երկրներ	170,7	73.9281	47.13
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	ԱՊՀ երկրներ	125,83	141.37	85.8
	Այլ երկրներ	42,53	16.566	10.39
Հանքաքար, խարամ և մոխիր	ԱՊՀ երկրներ	0,011	-	-
	Այլ երկրներ	3,705	1.1163	0.91
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	ԱՊՀ երկրներ	514,63	737.55	272.25
	Այլ երկրներ	335,31	224.14	134.27
Կոշիկ, զուգագուլպա	ԱՊՀ երկրներ	300091,6	112203.3	109036.1
	Այլ երկրներ	1074,82	312.4	471.34
Իրեր՝ քարից, գիպսից	ԱՊՀ երկրներ	3225,06	5137.984	4681.09
	Այլ երկրներ	410,96	296.71	104.86
Բնական կամ արհեստական մարգարիտ , թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՀ երկրներ	235.68	987.64	2971.7
	Այլ երկրներ	340.24	260.01	203.21
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	17.97	34,85	41,017
	Այլ երկրներ	410,96	473,54	512,48
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	0,17	0.52	0.272
	Այլ երկրներ	1266.8	1205.45	1247.02
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	-	0.369	-
	Այլ երկրներ	3,11	2.94	0.76
Թռչող և տիեզերական ապարատներ	ԱՊՀ երկրներ	991,6	956.2	918.01
	Այլ երկրներ	5,06	2746.14	168.6
Արվեստի ստեղծագործություններ և հնաձև իրեր	ԱՊՀ երկրներ	6595,3	39248.22	94488.8
	Այլ երկրներ	158,05	189.08	189.95

<sup>33</sup> Տվյալները ստացվել են հեղինակի կողմից

## Աշխատանքի եզրակացություններն են.

1. ՌԴ, ԲՀ և ՂՀ կողմից ԵԱՏՄ ստեղծումը և գործունեությունը պայմանավորեց ԱՊՀ երկրներին վերլուծել տնտեսական ինտեգրման գործընթացները և ստորագրել ԵԱՏՄ անդամ դառնալու վերաբերյալ պայմանագիր:

2. ՀՀ տնտեսական ինտեգրման համար վճռորոշ փուլ դարձավ 2013 թվականը, երբ Հայաստանի Հանրապետությունը որոշում ընդունեց Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության Մաքսային միություն, իսկ հետագայում ԵԱՏՄ միանալու վերաբերյալ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը շարունակեց բանակցությունները Եվրոպական միության երկրների հետ տնտեսական հարաբերությունների խորացման և ծավալման ուղղությամբ, որոնք պայմանավորված էին վերջին քսան տարվա ընթացքում առևտրի և ներդրումների ծավալի մեծացմամբ:

3. Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության կողմից ստեղծված Եվրասիական տնտեսական միությանը միանալը պայմանավորում է.

ա) ԵԱՏՄ մաքսային և առևտրային օրենսդրությունների դրույթների հետ ՀՀ օրենսդրության միասնականացման անհրաժեշտությունը,

բ) ԵԱՏՄ միանալու հետ կապված Հայաստանի Հանրապետության համար բացասական հետևանքները բացառելու և/կամ նվազեցնելու նպատակով Ռուսաստանի Դաշնության կողմից կատարվող վճարումների չափի, այդ թվում բնական գազի ՌԴ-ի կողմից սուբսիդավորման օպտիմալ չափի որոշման անհրաժեշտությունը,

գ) Եվրասիական տնտեսական համագործակցության կազմի մեջ ՀՀ ինտեգրմանն ուղղված գործընթացի հետագա խորացման քաղաքականության մշակման անհրաժեշտությունը,

դ) Եվրոպական տնտեսական համագործակցության երկրների հետ երկկողմանի և/կամ բազմակողմանի տնտեսական հարաբերություններ (միջազգային առևտրի, օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու, վերազգային ձեռնարկությունների ստեղծման) հաստատելու ՀՀ քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

4. Ուսումնասիրվող հիմնախնդիրների շրջանակում իրականացված հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս պնդելու, որ ՀՀ-ում արտադրվող որոշ ապրանքին խմբերը ունեն մրցակցային համեմատական առավելություններ միջազգային շուկաներում:

5. ՀՀ-ն ունի փոքր տնտեսություն ու հետևաբար, միանալով ԵԱՏՄ-ին իր անդամակցության պահմապանման համար պետք է ապահովի միջազգային շուկաներում մրցունակություն ունեցող արտադրանքի արտադրություն:

6. ՀՀ-ի համար արդյունավետ է համագործակցել ինչպես ԵԱՏՄ-ի հետ, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում կայացած այլ տնտեսական միությունների հետ՝ հիմնված երկկողմանի և/կամ բազմակողմանի տնտեսական համագործակցության պայմանագրերի վրա:

7. Տնտեսական համագործակցության համաշխարհային փորձը և արդի հաղորդակցման միջոցների զարգացումը ցույց են տվել, որ տնտեսական միության անդամները կարող չունենալ ընդհանուր սահմաններ՝ ուստի ՀՀ-ն չունենալով ԵԱՏՄ երկրների հետ ընդհանուր սահմաններ այն ու ամենայնիվ կարող է արդյունավետորեն համագործակցել ԵԱՏՄ-ի երկրների հետ:

8. ՀՀ-ում արտադրվող միջազգային շուկաներում համեմտական մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերի առկայությունը պայմանավորում է, որպեսզի ՀՀ ՕՈՒՆ հոսքերը ուղղորդվեն տնտեսության այն ճյուղերը, որոնք արտադրում են միջազգային շուկաներում մրցունակ արտադրանք: Այդ հարցում կարևորվում է ապահովել ՕՈՒՆ-երի օգտագործման թափանցիկություն:

9. ՀՀ տնտեսությունում անհրաժեշտ է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի տնտեսական համագործակցության զարգացումը հարևան երկրների Վրաստանի և Իրանի հետ:

10. Հաշվի առնելով նոր տնտեսական միությունները ի դեմս վերջերս ձևավորված Բրազիլիա-Ռուսաստան-Հնդկաստան-Չինաստան-Յարաֆային Աֆրիկա միությունը ՀՀ-ի համար արդյունավետ է համագործակցել այդ միության հետ այնպիսի ուղղություններով, որոնք հնարավորություն կստեղծեն գրավել ՕՈՒՆ ՀՀ-ի մրցունակ արտադրանք արտադրող ճյուղեր՝ այդ ճյուղերը բացահայտվել են ատենախոսության հետազոտությունների արդյունքում: Նման քաղաքականության իրականացման արդյունքում ՀՀ-ն հնարավորություն կստանա.

- ընդլայնել համատեղ ձեռնարկությունների ցանցը, ստեղծել նոր արտադրություններ և վերամշակել արտադրական սեփական հումքը,
- մասնակցել գլոբալ ավելացված արժեքի ստեղծմանը, ապահովել զբաղվածության մակարդակի աճ, ինչպես նաև արտադրողականության աճ:
- ներմուծել առաջատար տեխնոլոգիաներ, նորարարություններ՝ ապահովելով դրանց դրական ազդեցությունը տնտեսության վրա:

### **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝**

1. Малхасян Н. М. <<Сотрудничество республики Армения со странами ТС в области торговли и инвестиций>>, <<Այլընտրանք>> գիտական հանդես N4, Երևան 2014թ., էջ 23-35,
2. Մալխասյան Ն.Ս. <<Միջազգային շուկաներում ՀՀ արտահանման մրցունակության վերլուծություն>>, <<Այլընտրանք>> գիտական հանդես N1, Երևան 2015թ., էջ 110-120,
3. Մալխասյան Ն. Ս., Առաքելյան Ա. Հ., <<Ռուսաստանի Ղաշնության վաճառվող գազի գների տատանումները և դրանց տնտեսական հետևանքները>>, <<Հայաստանի Ճարտարագիտական Ակադեմիայի Լրաբեր>> գիտական հոդվածների ժողովածու, Հ12, մաս 1, Երևան 2015թ., էջ 3-8,
4. Մալխասյան Ն. Ս. <<ՀՀ արտահանման մրցունակությունը ԵՄ և ԱՊՀ շուկաներում>> , <<ԵՊՀ, տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, 3 Միջազգային գիտաժողով>> գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2015թ., էջ 74-79,
5. Малхасян Н. М. <<Сравнительная динамика объемов торговли Армении с государствами ТС и с третьими странами>>, <<Անանիա Շիրակացի համալսարան>>, ցիտական հոդվածների ժողովածու, 1(22), Երևան 2015թ., էջ 153-161,
6. Մալխասյան Ն. Ս. << ՀՀ տնտեսության ներճյուղային մասնագիտացման ցուցանիշները>>, <<Այլընտրանք>> գիտական հանդես N 2, Երևան 2015թ., էջ 67-79 :

ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В  
УСЛОВИЯХ ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита состоится 10 июля 2015 года в 15:00 часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена изучению и анализу влияния экономического сотрудничества Армении на экономический рост. Изучаются области сотрудничества, эволюция экономических союзов, история создания и этапы развития различных форм сформировавшихся союзов. Это позволило автору обосновать развитие политики Республики Армения в области выбора соответствующего экономического союза-Евразийского экономического союза.

**Цели и задачи исследования.** Цели и задачи исследования диссертационной работы состояли в оценке эффективности сотрудничества Армении с Европейским экономическим союзом и Евразийским экономическим союзом, которая основана на изучении возможных тенденций развития процессов международной торговли, привлечения прямых иностранных инвестиций, создания совместных предприятий и участия в глобальной цепи создания добавленной стоимости. Для обеспечения возможности решения поставленной цели была выбрана структура исследования и логика связей, которые направлены на изучение следующих проблем:

- Выявить факторы и показатели экономического сотрудничества и предложить подходы для оценки эффективности присоединения Армении к Евразийскому экономическому союзу РФ, Беларуси и Казахстана,
- Изучить опыт оценки торгово – экономического сотрудничества, накопленный как отечественными исследователями, так и зарубежными и в частности работы Б. Баласса и Акуино,
  - Выявить продукцию изготавливаемую в Армении на предмет сравнительной конкурентоспособности на международных рынках,
  - Изучить участие Армении в рынках энергоносителей и в частности сотрудничества с рынком энергоносителей РФ.
  - Выявить и оценить возможное развитие сотрудничества Армении с рынком нефти и газа РФ и оценить возможное развитие субсидий, предоставляемых РФ,
  - Изучить влияние результатов присоединения Армении к Евразийскому экономическому союзу и оценить результаты этого влияния на рост ВВП Армении.
  - Обосновать необходимость регулирования процесса интеграции Армении в Евразийское экономическое пространство.

**Объект и предмет исследования.** Объектом исследования являются процессы экономического сотрудничества Армении, основанные на теоретическом, практическом

и методологическом материале, а предметом исследования является применение методологии, направленной на решение проблем экономического сотрудничества.

**Теоретические и методологические основы исследования.** Основой исследований диссертационной работы явились результаты исследований отечественных и зарубежных исследователей, направленные на изучение теоретических основ и практики экономического сотрудничества стран.

В процессе выполнения работы созданы экономико-математические модели, позволяющие оценить эффективность участия Армении в Евразийском экономическом союзе, а также рост ВВП, как результат сотрудничества.

**Основные научные результаты и научная новизна исследования.** В результате выполнения работы получены следующие научные результаты:

1. Изучены методы оценки межотраслевой специализации и предложены оценки товарных групп, производимых в Армении и имеющих конкурентоспособность на международных рынках,

2. Изучены временные ряды данных международной торговли Армении и применяя экономико-математические методы разработаны гравитационные модели международной торговли и предложены методы оценки конкурентоспособности продукции, изготавливаемой в Армении.

3. На основе изучения субсидий РФ в области снабжения Армении природным газом предложены модели оценки результатов влияния этих субсидий на рост ВВП Армении, что может позволить оптимизировать величину <<газовых субсидий>> РФ.

4. Приведена характеристика потоков прямых иностранных инвестиций и предложены подходы для их эффективного использования в экономике Армении.

NORAYR MANVEL MALKHASYAN

PROBLEMS OF ECONOMIC GROWTH OF THE REPUBLIC OF ARMENIA AS  
CONSEQUENCES OF THE ECONOMIC COOPERATION

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the Field of “Economics, Management of the Economy and its Branches” 08.00.02. The Defence of the Dissertation will take place on 10<sup>th</sup> July, 2015, at 15:00 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovian St., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

Present dissertation is devoted to the study of the economic cooperation and its impact on the economic growth. The developments of the processes of the economic cooperation, the history of the collaboration between economics and its impact on the economic growth are subjects of the study. The approach and the selection of the topic of the research allowed the author of the dissertation to substantiate the development of Armenian policy in the area of the economic integration and the decision making concerning the selection of economic union - Eurasian economic union.

**Objectives and problems of the research:** Objectives and problems of the research are the assessment of the efficiency of the cooperation of the republic of Armenia with Eurasian economic union and in addition, the cooperation with other economic unions existing in current world economy and especially with European economic union as most developed economic and political union. The study of the dissertation is based on the investigation of the processes of international trade and existing tendencies of the development of processes of the attracting direct foreign investments. As additional area of the research the study of the participation of the Republic of Armenia in global value added chain is studied. To provide the solution of suggested objectives and problems the structure of the study is developed. The study is directed to the solution of the problems as follows:

- To distinguish factors and scores of economic cooperation and propose approaches allowing the assessment of the efficiency of the entrance of the RA into EAEU of RF, Belarus and Kazakhstan.
- To study the experience gotten in the area of economic cooperation and use this methods and methodology for the assessment of economic cooperation of the RA,
- To distinguish production producing in the Republic of Armenia which have revealed competitiveness in international markets,
  - To study the participation of the republic of Armenia in the market of energy sources of RF and to assess ways of the cooperation with this market.
  - To study consequences of the cooperation of the Republic of Armenia with Eurasian economic union and to assess results of this cooperation.

▪ To substantiate needs of the adjustment of the processes of the economic integration of the Republic of Armenia with Eurasian economic union and to assess the efficiency of this integration as the consequences and impact on the growth of GDP.

**Object and subject of the study:** The object of the study is the process of the economic cooperation of the Republic of Armenia based on the methodological, theoretical and practical studies and the subject of the study is the usage of the methodology providing the solution of economic problems of the cooperation.

**Theoretical and methodological bases of the study:** Study of the current dissertation is based on the investigations of researchers directed on the study of theoretical bases of economic cooperation different economies. Through the development of economic mathematical simulation, the assessment of the efficiency of economic integration of Armenia is implemented in current research.

**Main scientific results of the study:** As an outcome of current research results are obtained as follows:

1. Methods of intersectoral specialization are studied and approaches for the assessment of production groups are proposed to provide the selection of products having revealed competitiveness in international markets.
2. The time series of international trade of Armenia are studied and using economic – mathematical models gravity models are developed and the competitiveness of Armenian production in international markets is assessed.
3. Through the study of Russian natural gas subsidies approaches and methods allowing the optimization of Russian payments against subsidies and Armenian obligation as users of these subsidies are proposed.
4. Through the characterizing direct investment to the Republic of Armenia proposals directed to the selection of branches of the economy producing products having competitiveness in international markets are proposed.
5. We presented a model based on regression analysis is developed and its application for the simulation of the Armenian GDP growth is implemented.

